2022-2023 ուստարի
Տարրական դասարանների մ/մ
Հաշվետվություն

Տարրական դասարաններում 2-րդ և 3-րդ դասարաններում դասավանդել ենք Տավուշում փորձարկվող նոր ծրագրով և չափորոշիչներով:Առաջնորդվել ենք պետական առարկայական ծրագրով և դրան համապատասխան կազմված թեմատիկ պլանով՝հիմք ընդունելով ՀՊՉ-ն և նախատեսված վերջնարդյունքները:Օգտվել ենք տեխնիկական միջոցներից:
4-րդ դասարաններում դասավանդումը կատարվել է միավորային:
Ավարտել ենք էլ. մատյանների բնութագրիչների նշումը և 4-րդ դաս-ի գիտելիքների ստուգումը:

Տարվա ընթացքում կատարվել են հետևյալ միջոցառումները
1.Գիտելիքի օր
2.Անկախության օրվան նվիրված թեմատիկ զրույց
3.Մասնակցություն դպրոցի դահլիճում անցկացված կրկեսին
Թեմ.զրույց «Ո՛չ պատերազմին》
4.Մնացորդային գիտելիքների ստուգում3-րդ և 4-րդ դասարաններում
5.Ա տառի շնորհանդես 1-ին դասարանում
6.Մնացորդային գիտելիքների ստուգում՝ներդպրոցական գրավ.աշխ.մաթեմ-ից4-րդ դաս-ում
7.Այցելություն Բերդավան հիմնադրամ՝ներդրում:
Մ/մ նիստ նվիրված ամանորյա միջոցառումների ձևաչափի փոփոխությանը
8.Բարեգործական նպատակով բեմականացման դիտում՝《Ձյունե թագուհին》
9.Բաց դաս-միջոցառում 4-րդ բ դասարանում 《Երկիր հայրենի 》թեմայի ամփոփում
10.Ամանորյա հանդես
11.Քաղցրավենիքի ուղարկում զինվորներին
12.Փոքրիկ միջոցառումներ նվիրված բանակի օրվան
13.Փոքրիկ միջոցառումներ նվիրված գիրք նվիրելու օրվան:
Նվեր գրադարանին:
4-րդ բ դասարանը գրքեր նվեր ուղարկեց Արագածոտնի մարզի դպրոց:Թեմատիկ զրույց նվիրված Թումանյանի կյանքին և գործունեությանը
14.Մայրենիի օր՝ թեմատիկ զրույց
15.Մասնակցություն մշակույթի տան կազմակերպած միջոցառմանը նվիրված մարտի 8-ին:2-րդ ա դասարանը կազմակերպեց միջոցառում մայրիկների հետ միասին նվիրված մարտի 8-ին:
Բոլոր դաս-ում եղան թեմատիկ զրույցներ և փոքրիկ միջոցառումներ:
16.Բացիկների և ծաղիկների պատրաստում մայրիկների և տատիկների համար նվիրված ապրիլի 7-ին
17.Թեմատիկ զրույցներ նվիրված ապրիլի 24-ին
18.Մասնակցություն մշակույթի տան կազմակերպած միջոցառմանը՝նվիրված եռատոնին,անվանական դասարանների բացմանը՝նվիրված համագյուղացի հերոսներին:Ակտիվ աշակերտներ ի մասնակիցությամբ այցելություն հուշահամալիր:Թեմատիկ զրույցներ
19.2-րդ բ դասարանը կազմակերպեց տարեվերջյան ամփոփիչ դաս-միջոցառում
20.4-րդ դասարանները միասին կազմակերպեցին《Հրաժեշտ տարրական դպրոցին》միջոցառումը
21.Տարեվերջյան էքսկուրսիաներ և արշավներ

Ամբողջ տարվա ընթացքում կատարվել են դասալսումներ,բաց դասեր,դաս-միջոցառումներ և քննարկումներ:
Երաժշտություն առարկայից անց են կացվել ներկայացումներ 《Շունն ու կատուն》,
《Պապն ու շաղգամը》:Բեմադրվել է հատված Մ.Մազմանյանի 《Ճուտիկ》
մանկական օպերայից:
3-րդ դասարանցիները ծանոթացել են ազգային նվագարաններին և ունկնդրել են
տեսանյութեր:Բեմադրվել է 《Մկնիկ հարսնացուն》,դիտել ե《Պետյան և գայլը》
սիմֆոնիկ հեքիաթը:
Տարրական դպրոցը հյուրընկալվել է Բերդավանի երաժշտական դպրոց:Սիրով ունկնդրել են իրենց դասընկերների կատարումները:
Կերպարվեստ առարկայից 2-րդ և3-րդ դասարանցիները գրել են սցենար իրենց նախընտրած թեմայով:Թեմային համապատասխան պլաստիլինից պատրաստել են տիկնիկներ և բեմադրել տիկնիկային թատրոն:
Ավարտեցինք 4-րդ դաս-ի գիտելիքների ստուգումը:Բացասական գնահատական չկար:Յուր.աշակերտ ստացավ իր տարեկանին համապատասխան գնահատական, շեղումները քիչ էին:
Վերջին նիստում ամփոփեցինք ուստարին,տարվա աշխատանքը գնահատվեց բավարար,ուրվագծվեցին հաջորդ տարվա կատարվելիք աշխատանք ները:

Մ/մ նախագահ՝ Թամարա Ալեքսանյան

Digitally signed by NASIBYAN ASTGHIK 6910670051
Date: 2023.07.04 10:43:51 AMT